Հարցաշար
«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ-2024
10-րդ դասարան

№ 1-4
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
(0,5 X 4 = 2 միավոր)

1. ***Ո՞ր տիեզերական ժողովի որոշումները չընդունեց և մերժեց Հայոց եկեղեցին.*** ***(0,5 միավոր)***

   1. Նիկիայի
   2. Կոստանդնուպոլսի
   3. Եփեսոսի
   4. Քաղկեդոնի

2. ***Հայոց ո՞ր կաթողիկոսով է սկսվում Պահլավունի տոհմի գահակալության շրջանը.*** ***(0,5 միավոր)***

   1. Գրիգոր Բ. Վկայասեր
   2. Ստեփանոս Գ. Սևանցի
   3. Բարսեղ Ա. Անեցի
   4. Անանիա Ա. Մոկացի

3. ***Հայոց ո՞ր կաթողիկոսը հայրապետական աթոռը 1150 թ. տեղափոխեց Հռոմկլա ամրոց.*** ***(0,5 միավոր)***

   1. Գրիգոր Բ. Վկայասերը
   2. Ստեփանոս Գ. Սևանցին
   3. Գրիգոր Գ. Պահլավունին
   4. Անանիա Ա. Մոկացին

4. ***Ստորև թվարկվածներից ո՞րն է հավատի հիմքը.*** ***(0,5 միավոր)***

   1. Սթափ գիտակցություն ունեցող բարոյական մարդը.
   2. Կույր հավատն առ Աստված.
   3. Աստծու և մարդու միջև առկա խորհրդավոր կապի գիտակցումը.
   4. Տրամաբանական հաշվարկները և բարձր բարոյականությունը.

№ 5-8

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

(1 X 4 = 4)

5. Եկեղեցին կառուցելիս կատարվում է _____: (1 միավոր)

6. Ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպես կարող է սիրել _____, որին չի տեսել: (1 միավոր)

7. 1465 թ. Ստեփանոս Տղան հանդիսավորությամբ _____ օծում է Հայոց թագավոր: (1 միավոր)

8. Համաձայն _____ ուսմունքի՝ մարդը կամքի ազատություն չունի, ամեն մի արարք նա կատարում է արտաքին ազդակների ճնշման տակ, որոնք կախված չեն իրենից: *(1 միավոր)*

№ 9-10

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ

(1 x 2 = 2 միավոր)

9. Կատարել համապատասխանեցում. (1 միավոր)

1. Խաչիկ Ա.	ա. Մոկացի	1
2. Գրիգոր Բ.	բ. Տղա	2
3. Գրիգոր Դ.	գ. Վկայասեր	3
4. Ս. Ներսես Դ.	դ. Կլայեցի	4
5. Անանիա Ա.	ե. Արշարունի	5
6. Գևորգ Բ.	զ. Պահլավունի	6
7. Գրիգոր Գ.	է. Գառնեցի	7
8. Գրիգոր Զ.	ը. Ապիրատ	8
9. Սարգիս Ա.	թ. Անեցի	9
10. Խաչիկ Բ.	ժ. Սևանցի	10

10. Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել գահակալման տարեթվերին: (1 միավոր)

1) Գէորգ Դ. Կոստանդնուպոլսեցի	ա) 1831-1842 թթ.	
2) Մակար Ա. Թեղուտցի	բ) 1843-1857 թթ.	
3) Հովհաննես Ը. Կարբեցի	գ) 1858-1865 թթ.	
4) Գէորգ Ե. Սուրենյանց	դ) 1866-1882 թթ.	
5) Ներսես Ե. Աշտարակեցի	ե) 1885- 1891 թթ.	
6) Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի	զ) 1908-1910 թթ.	
7) Մատթեոս Բ. Կոստանդնուպոլսեցի	է) 1911 -1930 թթ.	
8) Խորեն Ա. Մուրադբեկյան	ը) 1932-1938 թթ.	
9) Վազգեն Ա. Պալճյան	թ) 1955-1994 թթ.	

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	

№ 11

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանք

***11.* Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**
(1 միավոր)

ա. Արշակ 2-րդը հրավիրում է ժողով, որը կաթողիկոս է ընտրում Ս. Ներսեսին:
բ. Մահացավ Ս. Վրթանեսը:
գ. Մահացել է Ս. Սահակ Պարթևը:
դ. Աշտիշատում գումարվում է Հայոց առաջին Ազգային-եկեղեցական ժողովը:
ե. Պարսից արքունիքը թագավոր է ճանաչում Արտաշես 3-ին:
զ. Հուլիանոսին փոխարինած կայսրը պարսիկների հետ կնքում է «Ամոթալի պայմանագիրը»:
է. Մահացել է Ս. Մեսրոպ Մաշտոցը:
ը. Ս. Սահակ կաթողիկոսն ազատվում է աքսորից և վերադառնում Հայաստան:
թ. Եփեսոսում գումարվել է Երրորդ տիեզերական ժողովը:

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	

№ 12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով

(1 x 4 = 4 միավոր)

12. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին: ***(2 միավոր)***

«Եվ ինչպես կարելի է այդ իմ հոտի հիվանդ ոչխարը փոխել առողջ գազանի հետ, որի առողջությունը մեզ համար պատուհաս է»:

1. *Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.* *(1 միավոր)*

_____

2. *Ու՞մ էր ուղղված կաթողիկոսի խրատական խոսքը.* *(1 միավոր)*

_____

13. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին: ***(2 միավոր)***

«...մնաց բարձրագահ աթոռի վրա՝ Ս. Էջմիածնում ուղիղ վարդապետությամբ, նորոգեց ավերակները նոր շինությամբ, պայծառացրեց միաբաններով ու վարդապետներով, պատշաճ ու հաստատուն ժամակարգությամբ հարստացրեց եկեղեցական անոթներով, նյութական հարստությամբ»:

1. Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը: *(1 միավոր)*

_____

2. Ո՞ւմ մասին է գրել հեղինակը: *(1 միավոր)*

_____

№ 14-15

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կառուցման սկզբունքին: ***(0,5 միավոր)***

Նորավանք, Աղբերց վանք/Գլաձոր/, Հերմոնի վանք, Արատեսի վանք, Մակարավանք

_____

_____

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ: ***(0,5 միավոր)***

Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Արիստակես, Ս. Վրթանես, Ս. Հուսիկ, Ս. Գյուտ, Ս. Ներսես Մեծ

_____

_____

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: (0,5 միավոր)

ա) «Ես եմ քո Տեր Աստվածը … Ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար», «Հավատքի մեջ երբեք չթուլանա՛ս», «Կուռքեր չունենա՛ս», «Քո Տեր Աստծո անունը զուր տեղը չպիտի արտասանես», «Քո մերձավորի ունեցածի վրա աչք մի՛ ունեցիր», «Մի՛ ստիր», «Սիրեցե՛ք միմյանց»

բ) «Ես եմ քո Տեր Աստվածը … Ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար», «Կուռքեր չունենա՛ս», «Քո Տեր Աստծո անունը զուր տեղը չպիտի արտասանես», «Քո մերձավորի ունեցածի վրա աչք մի՛ ունեցիր», «Մի՛ ստիր», «Սիրեցե՛ք միմյանց», «Մի՛ ծուլացիր»:

գ) «Ես եմ քո Տեր Աստվածը … Ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար», «Կուռքեր չունենա՛ս», «Մի՛ շնացիր», «Քո Տեր Աստծո անունը զուր տեղը չպիտի արտասանես», «Մի՛ ստիր», «Քո մերձավորի ունեցածի վրա աչք մի՛ ունեցիր», «Մի՛ սպանիր»:

_____

_____

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: (0,5 միավոր)

ա. Դավիթ Անհաղթ, Եզնիկ Կողբացի, Ղազար Փարպեցի, Ներսես Շնորհալի, Մովսես Խորենացի, Գյուտ Արահեզացի.
բ. Դավիթ Անհաղթ, Ներսես Շնորհալի, Սահակ Պարթև, Մովսես Խորենացի, Եզնիկ Կողբացի, Գրիգոր Նարեկացի.
գ. Դավիթ Անհաղթ, Եզնիկ Կողբացի, Հովսեփ Հողոցմեցի, Ներսես Շնորհալի, Մեսրոպ Մաշտոց, Կորյուն.

_____

_____

15.3. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը. ճիշտ շարքին ավելացնել առնվազն մեկ անվանում: (1 միավոր)

ա. Խոնարհություն և ագահություն, ողջախոհություն և ժուժկալություն, գթասրտություն և որկրամոլություն,
բ. Խոնարհություն և հպարտություն, գթասրտություն և ագահություն, ողջախոհություն և բղջախոհություն,
գ. Խոնարհություն և հպարտություն, ողջախոհություն և գթասրտություն, ժուժկալություն և որկրամոլություն,

_____

_____

№ 16-17

Նկար-առաջադրանքներ

16.

16.1. Ո՞վ է պատկերված նկարում: (0,5 միավոր)

_____

16.2.Հայոց եկեղեցու ո՞ր նվիրապետական աթոռի հոգևոր առաջնորդն է եղել նա: (0,5 միավոր)

_____

_____

17. **Ո՞ր եկեղեցիներն են պատկերված նկարում: Նշել եկեղեցու գտնվելու վայրը:**

17.1 (0,5 միավոր) 17.2. (0,5 միավոր)



1. _____

2. _____

№ 18

Շարադրանք

(4x0,5=2 միավոր)

1. ***Հայրապետական աթոռի հաստատումը Հռոմկլայում: (0,5 միավոր)***
2. ***Թվարկել Հայ Առաքելական Եկեղեցու յոթ առաքինությունները: (0,5 միավոր)***
3. ***Թվարկել Հայ Առաքելական Եկեղեցու յոթ մոլությունները: (0,5 միավոր)***
4. ***Հայոց Եկեղեցին 18-րդ դարի առաջին կեսին: (0,5 միավոր)***